ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

14 նոյեմբերի 2023 թվականի N 551

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ «ԱԲՀ-ԷԱՃԾՁԲ-24/04» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՁԵՎԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի ապրիլի 6-ի N 386-Ն և մայիսի 4-ի N 526-Ն որոշումներով և հիմք ընդունելով Աբովյանի համայնքապետարանի աշխատակազմի պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացված գնման հայտը.

1. Ձևավորել «ԱԲՀ-ԷԱՃԾՁԲ-24/04» ծածկագրով էլեկտրոնային աճուրդով Աբովյան համայնքի 2024 թվականի կարիքների համար գույքագրման և գնահատման ծառայությունների ձեռքբերման նպատակով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողով և հաստատել դրա ստորև ներկայացվող անհատական կազմը՝

1) Ա. Չոբանյան – Աբովյանի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական և եկամուտների հաշվառման բաժնի պետ - հանձնաժողովի նախագահ.

2) Լ. Իսահակյան - Աբովյանի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական և եկամուտների հաշվառման բաժնի պետի տեղակալ - հանձնաժողովի անդամ.

3) Գ. Խաչատրյան - Աբովյանի համայնքապետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի և գնումների բաժնի գլխավոր մասնագետ - հանձնաժողովի անդամ.

4) Լ. Շառաջյան - Աբովյանի համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի գլխավոր մասնագետ – հանձնաժողովի անդամ:

2. «ԱԲՀ-ԷԱՃԾՁԲ-24/04» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղար նշանակել Աբովյանի համայնքապետարանի աշխատակազմի գնումների գործընթացը համակարգող Ա. Թադևոսյանին:

3. Գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի առաջին նիստը տեղի կունենա 2023 թվականի նոյեմբերի 15-ին ժամը 11:00-ին Աբովյանի համայնքապետարանի շենքում՝ ք. Աբովյան, Բարեկամության հրապարակ 1 հասցեում:

4. Գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու դեպքում անգործության ժամկետը լրանալու, իսկ պայմանագիրը կնքվելու դեպքում դրա հաջորդող օրը հանձնաժողովը համարվում է լուծարված:

5. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում կարգադրության ընդունման մասին իրազեկման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ԲԱԲԱՅԱՆ

2023թ. նոյեմբերի 14
ք. Աբովյան